

# 3. Ինչպես ստանալ խնամք

---

## Ուղեգրեր

Ձեր Առաջնային խնամքի մատակարարը (PCP)-ն կամ մեկ այլ մասնագետ կտրամադրի ձեզ ուղեգիր՝ այցելելու մասնագետին այս ձեռնարկի «Խնամքի ժամանակին հասանելիություն» բաժնում նշված ժամանակահատվածում, եթե դրա կարիքը ունեք: Մասնագետը բժիշկ է, որը լրացուցիչ կրթություն ունի բժշկության որևէ ոլորտում: Ձեր PCP-ն կհամագործակցի ձեզ հետ՝ մասնագետ ընտրելու համար: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել ձեզ նշանակել ժամ՝ մասնագետին այցելելու համար: Այլ ծառայությունները, որոնք կարող են ուղեգիր պահանջել, ներառում են ամբուլատոր բուժումները, ռենտգեն հետազոտությունները և լաբորատոր աշխատանքը:

Ձեր PCP-ն կարող է ձևաթուղթ տրամադրել,  
որպեսզի տանք այն մասնագետի մոտ: Մասնագետը  
կլրացնի ձևաթուղթը և կուղարկի PCP-ին:

Մասնագետը կբուժի ձեզ այնքան ժամանակ, որքան  
նա կարծում է, որ ձեզ բուժում է անհրաժեշտ:

Եթե առողջական խնդիր ունեք, որի համար  
պահանջվում է երկարատև, հատուկ բժշկական  
խնամք, հնարավոր է՝ կարիք ունենաք մշտական  
ուղեգրի: Սա նշանակում է, որ կարող եք գնալ  
նույն մասնագետի մոտ մեկից ավելի անգամ՝  
առանց ամեն անգամ ուղեգրի ստանալու:

Եթե խնդիրներ ունեք ստանդարտ ուղեգրի  
ստանալու դեպքում կամ ցանկանում եք ստանալ  
Anthem-ի ուղեգրման քաղաքականության  
պատճենը, ապա զանգահարեք մեր Հաճախորդների  
խնամքի կենտրոն երկուշաբթիից ուրբաթ 7 a.m.-ից  
7 p.m.-ը անվճար **800-407-4627 (TTY 711)**

հեռախոսահամարով կամ **888-285-7801 (TTY 711)**

Los Angeles-ի անդամների համար:

## Ձեզ հարկավոր չէ ուղեգիր հետևյալի համար`

- PCP այցելություններ
- Մանկաբարձության/գինեկոլոգիայի (OB/GYN) այցելություններ
- Հրատապ կամ շտապ օգնության խնամքի այցելություններ
- Չափահասների զգայուն ծառայություններ, ինչպիսին է սեռական հարձակման խնամքը
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (ավելին իմանալու համար զանգահարեք Ընտանիքի պլանավորման տեղեկությունների և ուղղորդման ծառայության գրասենյակ **800-942-1054** հեռախոսահամարով)
- ՄԻԱՎ-ի թեստավորում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի մեծ տարիք ունեցողներ)

- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներին առնչվող ծառայություններ (12 տարեկան կամ ավելի մեծ տարիք ունեցողներ)
- Զիրոպրակտիկ ծառայություններ (ուղեգիր կարող է պահանջվել, երբ այն տրամադրվում է արտացանցային Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնների (FQHC), Գյուղական առողջապահական կլինիկաների (RHC), Առողջապահության անհատականացված ծրագրերի (IHCP) կողմից)
- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում

Անչափահասները կարող են նաև ստանալ հոգեկան առողջության որոշակի ամբուլատոր ծառայություններ, զգայուն ծառայություններ և հոգեմետ դեղերի օգտագործման խանգարումներին առնչվող ծառայություններ՝

առանց ծնողի համաձայնության: Մանրամասների համար կարդացեք «Անչափահասի համաձայնության ծառայություններ» և «Հոգեմետ դեղերի օգտագործման խանգարման բուժմանն առնչվող ծառայություններ» բաժիններն այս ձեռնարկում:

### **California-ի Քաղցկեղի հավասարության**

### **մասին օրենքի ուղեգրեր**

### **Քարոք քաղցկեղների արդյունավետ բուժումը**

### **կախված է բազմաթիվ գործոններից,**

### **ներառյալ ճիշտ ախտորոշումը և քաղցկեղի**

### **մասնագետների կողմից ժամանակին բուժում**

### **ստանալը:**

### **Եթե ձեզ մոտ ախտորոշվել է քարոք քաղցկեղ,**

### **California-ի քաղցկեղի ինամքի**

### **հավասարության նոր օրենքը թույլ է տալիս**

### **ձեզ ուղեգիր ինդրել ձեր բժշկից՝ հատուկ**

### **քաղցկեղի բուժում ստանալու համար**

### **ներգանցային Քաղցկեղի ազգային**

հնաստիտուտի (NCI) կողմից նշանակված  
քաղցկեղի կենտրոնում, NCI Յամայնքային  
Ուռուցքաբանության Յետազոտական  
Ծրագրի (NCORP) կից վայրում կամ  
որակավորված ակադեմիական քաղցկեղի  
կենտրոնում:

Եթե Anthem-ը չունենա ներգանցային NCI-ի  
համար հատուկ քաղցկեղի կենտրոն Anthem-ը  
թույլ կտա ձեզ ինդրել ուղեգիր՝ ստանալու  
քաղցկեղի բուժում այս արտացանցային  
կենտրոններից մեկում California-ում, եթե  
արտացանցային կենտրոնները և Anthem-ը  
համաձայնեն վճարման համար, եթե դուք  
ընտրեք քաղցկեղի բուժման մեկ այլ կենտրոն:

Եթե ձեզ մոտ քաղցկեղ է ախտորոշվել, դիմեք  
Anthem-ին, որպեսզի տեսնեք, թե արդյոք դուք  
որակավորում եք այս քաղցկեղի  
կենտրոններից որևէ մեկի ծառայությունները  
ստանալու համար:

# 4. Նպաստներ և ծառայություններ

---

**Medi-Cal-ի նպաստներ, որոնք  
ապահովագրված են Anthem-ի կողմից  
Ամբողջատոր ծառայություններ**

## ***Ճանաչողական առողջության գնահատումներ***

Anthem -ն ապահովագրում է ճանաչողական առողջության տարեկան գնահատումը 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամների համար, որոնք այլ կերպ իրավասու չեն նմանատիպ գնահատման՝ որպես Medicare ծրագրի շրջանակներում ամենամյա առողջական այցի մաս: Ճանաչողական առողջության գնահատումը փնտրում է Ալցհեյմերի հիվանդության կամ դեմենցիայի նշաններ: